

**ԱՆԱՀԻՏ ԱՍՏՈՅԱՆ, ԴԱՐԻ ԿՈՂՈՊՈՒՏԸ.
հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում
1914–1923 թթ., Եր., «Նաիրի», 2013, 252 էջ*:**

Հայոց ցեղասպանության արդյունքում հայ ժողովուրդն իր պատմական հայրենիքում ենթարկվել է ոչ միայն զանգվածային բնաջնջման, այլև ունեզրկման ու թալանի: Հայերի զանգվածային ունեզրկման գործընթացը Հայոց ցեղասպանության պատմության ավելի քիչ ուսումնասիրված հիմնահարցերից է:

Հասկանալի պատճառներով սկզբում Հայոց ցեղասպանության պատմության այս հիմնախնդրով զբաղվել են բացառապես Սփյուռքի մասնագետները: Այդ առումով առանձնանում են **Լևոն Վարդանի¹**, **Հայկազն Ղազարյանի²**, **Գևորգ Մեսրոպի³**, **Գևորգ Բաղջյանի⁴** և ուրիշների աշխատությունները: Հետագայում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հիմնախնդիրների ուսումնասիրության շրջանակներում հիմնահարցին սկսեցին ուշադրություն դարձնել նաև խորհրդահայ և հետխորհրդային հետազոտողները, որոնց թվում կարելի է առանձնացնել **Հ. Ինձիկյանի⁵**, **Ա. Համբարյանի⁶**, **Յու. Բարսեղովի⁷** և ուրիշների աշխատությունները:

«Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914–1923 թթ.» մենագրության հեղինակ Անահիտ Աստոյանը մինչև իր աշխատության հրատարակումը նախապես հանդես է եկել Օսմանյան կայսրության տնտեսությունում հայերի ունեցած դերին և Հայոց ցեղասպանության տարիներին նրանց զանգվածային ունեզրկմանը նվիրված գիտական հրապարակումներով⁸:

*Ընդունվել է տպագրության 20.11.2013

1 Տնն **Լևոն Վարդան**, Հայկական տասնհինգը և հայերու լքեալ գույքերը, Պէյրուֆ, 1970:

2 Տնն **Հայկազն Ղ. Ղազարեան**, Հայոց լքեալ գույքերու և կալվածքներու թալանը թուրքերու կողմէ, «Հայրենիք», Պոսթըն, 1964:

3 Տնն **Գևորգ Մեսրոպ**, Թուրքիոյ Հայոց կորուստները 1915–1921–ին ազգապատկան գույքերու տեսակետով, «Հայաստանի կոչնակ», Նիու Յորք, 1931:

4 Տնն **Kevorg K. Baghdjian**, La confiscation, par le gouvernement turc, des biens armeniens ... dits 'abandonnes', Montreal, Quebec 1987.

5 Տնն **Ինձիկյան Հ.**, Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ–տնտեսական ակնարկ, Եր., 1984: Տնն նաև՝ **Инджикян О.** Буржуазия Османской империи, Ереван, 1977.

6 Տնն **Համբարյան Ա.**, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908–1914 թթ.), Եր., 1978:

7 Տնն **Յուրի Բարսեղով**, Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999:

8 Տնն **Աստոյան Ա.**, Հայերն Օսմանյան տնտեսության մեջ: Տնտեսական գործոնը՝ Մեծ եղեռնի դրդապատճառ, «Վէմ», Եր., 2010, N 1(29); Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում 1915–1923 թթ.: Վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Վէմ», Եր., 2010, N 3 (31):

Հեղինակն աշխատանքը գրելիս օգտագործել է նորահայտ նյութեր, մասնավորապես Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային փաստաթղթերը, 1920-ական թվականների պոլսահայ մամուլի նյութերը, օտար լեզուներով, այդ թվում՝ թուրքերենով հրատարակված սկզբնաղբյուրներն ու հետազոտությունները: Ցավոք, Ա.Աստոյանի կողմից անտեսվել են հայերի նյութական կորուստներին վերաբերող Հայաստանի Ազգային արխիվի փաստաթղթերը, որոնք հրատարակվել են առանձին ժողովածուով⁹: Փաստաթղթերի այդ ժողովածուն ամփոփում է Առաջին աշխարհամարտի ընթացքում հայ ժողովրդի կրած վնասների չափի ուսումնասիրման և ներկայացման՝ Հովհաննես Թումանյանի գլխավորած բյուրոյի գործունեությունը: Արդյունքում ստեղծվել են Վանի, Բիթլիսի, Էրզրումի և մասամբ նաև Խարբերդի վիլայեթներում 1914-1915 թվականներին ցեղասպանական քաղաքականությունից տուժած և Արևելյան Հայաստան գաղթած արևմտահայերի նյութական կորուստների առանձին անկետաներ: Անկետաներին կցված են մանրամասն գույքացուցակներ, որոնցում ներկայացված են տեղեկություններ անգամ կորսված արժեթղթերի (մուրհակների, Օտտոմանյան բանկի հաշիվների) վերաբերյալ: Բացի անհատների կրած կորուստներից, ժողովածուում ներառված են նաև երկու հայկական եկեղեցիների և Էրզրումի Սանասարյան վարժարանի կորուստները: Կարծում ենք՝ այս արժեքավոր տեղեկությունների համակարգումն ու ներառումը աշխատանքի մեջ էապես կհարստացնեն այն:

Ներկայացնելով հայերի սոցիալ-տնտեսական վիճակը Օսմանյան կայսրությունում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում՝ հեղինակն արձանագրում է, որ նույնիսկ նման ծանր պայմաններում իրենց աշխատասիրության ու տաղանդի շնորհիվ նրանք կարողացան տիրապետող դիրքերի հասնել առևտրի ու արհեստների բնագավառում: Սկզբնական շրջանում երկրի տնտեսության տարրեր ճյուղերում հայերի ակտիվությունը թուրքական իշխանություններին այնքան էլ չէր վախեցնում, քանի որ առևտրով և արհեստներով զբաղվելը համարվում էր միայն գերիներին և ստրուկներին վայել զբաղմունք, իսկ հայերը, այլ ժողովուրդների հետ մեկտեղ, ոչ միայն զարգացնում էին երկրի տնտեսությունը, այլև պարտաճանաչ վճարում հարկերը: Մյուս կողմից էլ զինվորական և պետական ծառայության մեջ գտնվող թուրքերը վստահ էին, որ ցանկացած պահի կարող են զենքի կամ օսմանյան օրենքի ուժով ոչ մահմեդական առևտրականներից և արհեստավորներից խլել նրանց ունեցվածքը¹⁰: Սակայն 19-րդ դարի կեսերից թուրքական իշխանությունները տնտեսական տեռոր սկսեցին հայերի և ոչ քրիստոնյա բնակչության նկատմամբ, նրանցից կողոպտեցին մեծ քանակությամբ շարժական ու անշարժ գույք, մշակելի հողերի հսկայական տարածություններ: Պատճառն այն է, որ ոչ մահմեդականների տիրապետող դիրքերը կայսրության տնտեսությունում սկսել էր գրգռել նոր առաջացող թուրքական բուրժուազիային, որն ակնհայտորեն ի վիճակի չէր մրցակցելու ոչ հայկական, ոչ էլ հունական կապիտալի հետ, այդ պատճառով էլ դիմում էր իշխանությունների «օգնությանը»:

9 Стів Я обвиняю. Дело N...1.500.000, составитель С.Мирзоян, Ер., 2005.

10 Стів Աստոյան Ա., Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., էջ 8-9:

ԳՐԱԵՆՈՒՄԻՑՅՈՒՆՆԵՐ
 ԻՆՏԵՆՍԻՎՆԵՐ
 ԿՐԹՄ համահայկական հանդես
 Ե (ՃԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

Իսկ 1894-1896 թթ. Արդուլ Համիդի կազմակերպած հայկական ջարդերը մարդկային զոհերից զատ հայերին պատճառեցին նախկինի համեմատ էլ ավելի մեծ նյութական կորուստներ: Երիտթուրքական հեղաշրջումից մեկ տարի անց՝ 1909 թ. կազմակերպված Ադանայի և Կիլիկիայի այլ բնակավայրերի հայության կոտորածը նույնպես ուղեկցվեց հայերին հսկայական նյութական վնաս հասցնելով: Բացի տարբեր բնակավայրերում թալանված ու հրկիզված հայկական տներից, դպրոցներից, եկեղեցիներից ու շուկաներից, ավերվեց ու հրկիզվեց 595 խանութ, 265 ագարակ, 2 գործարան, 43 ֆաբրիկա, ջրաղացներ և պանդոկներ, ոչնչացվեցին հայերին պատկանող մեծ քանակությամբ պարտեզներ, բամբակի և այլ ցանքատարածություններ, որոնց նյութական ընդհանուր կորուստը կազմեց 5600.000 օսմանյան ոսկեդրամ¹¹:

Հեղինակը նշում է, որ հայերի տնտեսական հզորացման մեջ մեծ վտանգ տեսնելով՝ երիտթուրքերն իրենց գաղտնի ժողովներում, գիտակցելով հանդերձ կայսրության տնտեսության համար բոլոր աղետալի հետևանքները, քննարկում էին հայերի ոչնչացման միջոցով նաև նրանց տնտեսական ազդեցությունը վերացնելու և ունեցվածքին տիրանալու հարցերը¹²: Մակայն տարվելով Օսմանյան կայսրությունում հայերի տնտեսական ներուժի՝ քաղաքական իշխանության վերածվելու և թուրքական պետության համար սպառնալիք դառնալու վերաբերյալ թուրքական տեսակետների մեջբերումներով, հեղինակն ակամայից կարծես թե համակերպվում է Հայոց ցեղասպանության արդարացման թուրքական վարկածների որոշ դրույթների հետ, ուստի այս հարցում հարկավոր է ծայրահեղ զգուշավորություն ցուցաբերել: Փորձելով հայերի ունեզրկումը դիտարկել որպես Մեծ եղեռնի առանձին դրդապատճառ, այն կտրելով ավելի կարևոր շարժառիթներից, մասնավորապես՝ հայրենագրկման նպատակադրումից, հեղինակն էլ ավելի է հակվում Հայոց ցեղասպանության նախապատրաստման և իրագործման փուլերում տվյալ գործոնի գերազանահատմանը: Հայտնի փաստ է, որ մինչև ցեղասպանությունն էլ զանգվածային ունեզրկումը հանդիսացել է հայերի բոլոր մեծ ու փոքր ջարդերին ուղեկցող պարտադիր բաղադրիչ, սակայն շնորհիվ իր տաղանդի ու աշխատասիրության՝ արևմտահայությունը որոշ ժամանակ անց ոչ միայն վերականգնել է կորուստները, այլև էլ ավելի շոշափելի տնտեսական հաջողությունների է հասել: Ուստի ակնհայտ է, որ հայերի ունեցվածքին տիրանալու մոլուցքը թուրքական իշխանություններն ընդամենն օգտագործեցին իբրև գործուն խթան մոլեռանդ մահմեդականների, առաջին հերթին քուրդ բեկերի համար՝ նրանց վերածելով հայերի բնաջնջման պետական քաղաքականության գործիքի:

Ա. Աստոյանն ընդունում է, որ անգամ առանց զանգվածային ջարդերի՝ օսմանյան օրենսդրության արտոնություններից օգտվելով, մահմեդականները նախկինում էլ էին կարողանում անարգել կողոպտել հայերին, իսկ միանգամից նրանց ողջ ունեցվածքին տիրանալու հեռանկարը մահմեդական լայն զանգվածների մեծ բանակ հավաքագրեց երիտթուրքա-

11 Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 12:

12 Տե՛ս նույն տեղում, էջ 19:

կան իշխանությունների շուրջը¹³: Ուրեմն՝ այս ամենից ելնելով, հայերի ունեգրկումը հարկ է դիտարկել ոչ թե որպես Հայոց ցեղասպանության առանձին, ինքնուրույն դրդապատճառ, այլ հայրենագրկումը լրացնող բաղադրիչ, քանզի պանթուրքիստական գաղափարախոսությունը ենթադրում էր բոլոր ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին հայերի ոչնչացումը՝ անկախ նրանց տնտեսական կարողություններից ու սոցիալական վիճակից:

Հեղինակը բացահայտում է նաև հայերի ունեցվածքին տիրանալու համար թուրքական պետության որդեգրած պարզունակ սխեման. մինչև տեղահանությունը հայերին արգելում էին վաճառել իրենց ունեցվածքը, թուրքերին էլ ծանր պատժի սպառնալիքի տակ արգելվում էր նրանցից ապրանք գնել: Այսպիսով՝ նախքան տարագրությունը հայը գրկվում էր իր ունեցվածքը տնօրինելու իրավունքից և մահից առաջ նախ՝ սեփականագրկվում էր¹⁴: Այս ամենը նպատակ ուներ նաև, որպեսզի հայերն իրենց ունեցվածքի վաճառքից ստացված եկամուտով հնարավորություն չունենային երկար գոյատևել: Ու թեև թուրքական իշխանությունների կողմից ստեղծված հանձնաժողովները նախապես պետք է ճշգրտեին հայերի ունեցվածքի չափը՝ իբր նրանց վերադարձնելու նպատակով, սակայն Պոլսի Զավեն պատրիարքի և օտար դիվանագետների վկայությամբ՝ «Լքյալ գույքի մասին» օրենքն իրականում այդպես էլ չգործադրվեց. հայերի ունեցվածքի մեծ մասը փչացավ կամ թուրքերի ձեռքն անցավ¹⁵:

Ա.Աստոյանն իրավացիորեն նշում է, որ թուրքական պաշտոնական պատմագրությունը որպեսզի ապացուցի, թե իբր՝ տեղահանությունը հայերին ոչնչացնելու նպատակ չի հետապնդել, հաճախ վկայաբերում է այն փաստը, որ հայերի ունեցվածքի յուրացման, գողության և կաշառք տալու մեղադրանքով սեփական պաշտոնը չարաշահած 1937 մարդու նկատմամբ հետաքննություն է իրականացվել, և նրանց մեծ մասը տարբեր պատիժների է ենթարկվել: Ակնհայտ է, սակայն, որ հարուցված դատական գործերը նպատակ էին հետապնդում ոչ թե վերադարձնել հայերի ունեցվածքը և հատուցել նրանց կորուստները, այլ դրա վաճառքից ստացված շահույթը անհատներից ուղղել պետական գանձարան: Այսինքն՝ այդ անձինք պատասխանատվության են ենթարկվել ոչ թե հայերի, այլ պետության դեմ հանցանք կատարելու համար:

Հայերի ունեգրկումն իրականացնելու ընթացքում թուրքական իշխանությունները փորձեցին տիրանալ նաև օտարերկրյա ապահովագրական ընկերություններում պահ տրված ավանդներին: Սեփական երկրի բանկերի հայ ավանդատերերի ավանդներին տիրանալուց հետո թուրքական իշխանություններն անցան օտարերկրյա բանկերի և ապահովագրական ընկերությունների հայ ավանդատերերի գումարների յուրացման գործին: Մասնավորապես Թալեաթ փաշան Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին առաջարկել է իրեն հանձնել “New York Live Insurance Company” և “Eguitable live of New York” ամերիկյան ապահովագրական ընկերությունների հայ ավանդատերերի լիակատար ցանկը, պատճառաբա-

13 Տես Աստոյան Ա., նշվ. աշխ, էջ 32:
14 Տես նույն տեղում, էջ 50:
15 Տես նույն տեղում, էջ 147-148:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ե (ԺԵ) քաարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

ներով, որ նրանք բոլորը մահացել են առանց ժառանգներ թողնելու և նրանց գումարները պատկանում են կառավարությանը: Ներքին գործերի նախարարության հրամանով Առևտրի նախարարությունը 1916 թ. մարտին նույնիսկ կայսրությունում գործող բոլոր օտար ապահովագրական ընկերություններին ուղղված շրջաբերական է հրապարակել, որով պահանջվում էր հայերի ներդրումների հետ կապված տեղեկություններ փոխանցել «Լքյալ գույքի» հանձնաժողովին¹⁶:

Հայկական եկեղեցական վայրերի և մշակութային արժեքների կողպուտի համար ևս «իրավական» հիմք է ծառայել նույն՝ «Լքյալ գույքի մասին» օրենքը, մասնավորապես նրա 6-րդ հոդվածը, որը վերաբերում էր հայ եկեղեցու գույքին¹⁷: Հայոց ցեղասպանությանը զուգահեռ ընթացավ մի գործընթաց, որի հետևանքով հայկական վանքերը, եկեղեցիները, առաջնորդարաններն ու ուսումնական հաստատությունները կողոպտելուց, հրկիզելուց, քանդելուց և ունեցվածքի վաճառքից հետո դրանք վերածվեցին ավտոների, բնակարանների, ամառանոցների, նույնիսկ գորակայանների ու մզկիթների¹⁸: Իսկ հայկական ձեռագրերի ոչնչացումը խոշոր հարված էր ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակույթին ու գիտությանը և անդառնալի կորուստ համաշխարհային քաղաքակրթության համար:

Հայերի ունեզրկման մասին օտար վկայություններին վերաբերող բաժնում օտարերկրյա դիվանագետների պաշտոնական զեկուցագրերի, օտարերկրացիների հիշողությունների և օտարերկրյա մամուլի նյութերի մեջ առկա հայերի զանգվածային սպանությունների փաստերի վերհանմանը զուգահեռ, հեղինակը մատնանշում է նաև նրանց ունեզրկման մասին տեղեկությունները: Իսկ թուրքական աղբյուրներում այս հիմնախնդրին անդրադարձը Ա.Աստոյանն ամփոփում է օսմանյան մամուլի հրապարակումներով: Դրանցում պարունակվում են կարևոր տեղեկություններ, որովհետև 1918 թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին օսմանյան խորհրդարանում կայացած լուսնների ժամանակ քննարկվեցին «Տեղահանության» և «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքների կիրառման հետ կապված բազմաթիվ չարաշահումներ: Հեղինակը նշում է, որ Սսից ընտրված հայ պատգամավոր Մաթևոս Նալբանդյանը խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում մի քանի պատգամավորների հետ միասին պահանջում էր չեղյալ համարել նշված օրենքները, քանզի դրանք հակասում էին երկրի սահմանադրությանը: Լուսնների արդյունքում խորհրդարանն այդ օրենքները ձանաչեց հակասահմանադրական և իրավական առումով անվավեր: Մի քանի օր անց՝ 1918 թ. նոյեմբերի 18-ի նիստում պատգամավորները նույնիսկ պահանջեցին պատժամիջոցներ կիրառել այն պաշտոնյաների և անհատների նկատմամբ, ովքեր ստրկության մեջ էին պահում հայ կանանց և որբերին, վերադարձնել հայերից հափշտակված գույքն ու ունեցվածքը և հատուցել նրանց վնասները¹⁹:

Թուրքական աղբյուրներում հայերի զանգվածային ունեզրկման փաստերի արձանագրման առումով չափազանց կարևոր են ռազմական տրի-

16 Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 57:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 88:

18 Տե՛ս նույն տեղում:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 78:

բունալների նյութերը, հատկապես մեղադրական եզրակացությունները և դատավճիռները, որոնցում հայերի զանգվածային սպանությունների հետ մեկտեղ առկա են նրանց ունեզրկման քաղմաթիվ փաստեր: Օրինակ՝ ռազմական տիրունալի 1919 թ. ապրիլի 8-ի դատավճռում ասվում է, որ հայերի քարավանների կողոպուտը հրամայված էր պետական պաշտոնյաների կողմից, և այդ կերպ նրանք կանխամտածված կերպով հայերին զրկել են ապրելու անհրաժեշտ միջոցներից՝ նպաստելով տեղահանվող հայերի սովամահությանը²⁰:

Հեղինակը, համադրելով թուրքական ռազմական տիրունալների դատավճիռները, ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի՝ ցեղասպանության հանցակազմի հետ, նկատում է, որ հայերի ունեզրկումը համապատասխանում է այն գործողությունների շարքին, որոնցով դիտավորյալ ստեղծվում են մարդու կենսագործունեության համար անհամատեղելի այնպիսի պայմաններ, որոնք նպատակ ունեն ոչնչացնել մարդկանց տվյալ խումբը ամբողջությամբ կամ մասնակիորեն: Այսպիսով, դժվար չէ նկատել թուրքական ռազմական տիրունալների դատավճիռներին և ՄԱԿ-ի կոնվենցիայի բնութագրումների նույնականությունը:

Աստղյանն անդրադառնում է նաև Առաջին աշխարհամարտից հետո Թուրքիայում հաստատված քեմալական վարչակարգի կողմից կազմակերպված հայերի զանգվածային սպանությունների և ունեզրկման քաղաքականությանը: Հեղինակը ժամանակի մամուլի և օտար դիվանագետների վկայությունների հիման վրա ցույց է տալիս, որ երիտթուրքական վարչակարգի հեռանալուց հետո թուրքական նոր իշխանությունները բազմաթիվ խոչընդոտներ էին ստեղծում ողջ մնացած հայերի համար՝ իրենց բնակավայրեր վերադառնալու և սեփական ունեցվածքի նկատմամբ իրավունքի վերականգնման ճանապարհին և շարունակում էին նրանց ենթարկել թալանի ու բռնությունների:

Չկարողանալով թուրքական իշխանություններից հասնել իրենց գույքային իրավունքների վերականգնմանը՝ կիլիկիահայ վաճառականները ստիպված էին խնդրանքով դիմել Կիլիկիայում ֆրանսիական զինվորական առաքելության ղեկավար, Ադանայի կուսակալ գնդապետ Բրենոնին, որն ընդառաջելով հայերի խնդրանքին՝ 1919 թ. հունվարի 19-ին ընդունեց «Տարագրյալ հայերի հողային իրավունքների մասին» որոշումը, որով չեղյալ էր համարվում կիլիկիահայության կալվածքների վաճառքը, և պետք է վերականգնվեին նրանց իրավունքները այդ գույքի նկատմամբ:

Հատկանշական է, որ երբ Անտանտի երկրների ճնշման տակ գտնվող Կ.Պոլսի թուրքական իշխանությունները 1920 թ. հունվարի 8-ին որոշում ընդունեցին, որով անվավեր ճանաչվեց ինչպես «Լքյալ գույքի մասին», այնպես էլ այն լրացնող 1915 թ. սեպտեմբերի 13-ի օրենքը և 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրությունը, տեղական իշխանությունները ոչ միայն չէին շտապում իրագործել այդ որոշումները, այլև շարունակում էին թալանի և բռնությունների քաղաքականությունը:

Թուրքական աղբյուրների նյութերի հիման վրա հեղինակն արձանագրում է, որ քեմալական շարժումը ֆինանսավորվել է հայերի ունեցվածքի

20 Տե՛ս Աստղյան Ա., նշվ. աշխ., էջ 86:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ե (ԺԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

կողոպուտով հարստացած թուրք կալվածատերերի, առևտրականների և զինվորականների կողմից, իսկ ինքը՝ Քեմալը, իր շարժմանը չմիացած թուրքերին վախեցնում էր նրանով, որ հայերը կվերադառնան և հետ կվերցնեն իրենց ունեցվածքը, եթե նրանք չհամալրեն շարժման շարքերը: Ուստի բնական է, որ 1920 թ. ապրիլի 23-ին Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ Անկարայում գումարված Ազգային մեծ ժողովը օրենք ընդունեց, որով մերժվում էին Կ. Պոլսի իշխանությունների ընդունած որոշումները: 1920 թ. ապրիլի 23-ին ընդունված առաջին փաստաթղթերից մեկով արգելվեց հայերի՝ իրենց հայրենիք վերադառնալը, իսկ 1921 թ. օգոստոսի 8-ին «Ազգային տուրք» կոչված հրահանգի 6-րդ կետով Մուսթաֆա Քեմալը երկրից հեռացածների՝ պետական գանձարանին փոխանցված գույքը համարեց բռնագրավված²¹:

1922 թ. ապրիլի 20-ին Անկարայի Ազգային մեծ ժողովը ընդունում է «Թշնամու (ֆրանսիացիների) գրաված տարածքների ազատագրումից հետո այդ վայրերում մնացած լքյալ գույքի մասին» օրենքը, ինչը «Լքյալ գույքի մասին» օրենքի վերականգնումն էր և ակնհայտորեն հակասում էր 1921 թ. հոկտեմբերի 20-ի թուրք-ֆրանսիական պայմանագրով սահմանված՝ կիլիկիահայերի ունեցվածքի պաշտպանությանը վերաբերող դրույթներին²²: 1923 թ. ապրիլի 15-ին քեմալականներն իրենց վերահաստատած «Լքյալ գույքի մասին» օրենքին կցեցին ևս 6 հոդվածներ և փաստորեն շարունակեցին հայերի ունեզրկման քաղաքականությունը՝ ապացուցելով, որ իրենք հանդիսանում են նախկին հանցավոր վարչակարգի իրավաժառանգները և իրենց վրա վերցնելով նաև վերջինիս կատարած հանցագործությունների պատասխանատվությունը:

Կիլիկիահայության՝ 1921 թ. և Զմյուռնիայի հայության՝ 1922 թ. կոտորածի ժամանակ քեմալականների կողմից գործնականում դրսևորվեց երիտթուրքերից ժառանգած՝ հայերի զանգվածային ունեզրկման ու թալանի քաղաքականությունը: 1923 թ. հերթը հասավ նաև մայրաքաղաքին. պոլսահայ թերթերը սկսեցին լուրեր տարածել քաղաքի քրիստոնյաների տեղահանության մասին: Դա պայմանավորված էր նրանով, որ դեռևս Զմյուռնիայի հայ և հույն բնակչության ջարդերի օրերին՝ 1922 թ. սեպտեմբերին, մահմեդականները Կ. Պոլսում նույնպես անկարգություններ էին կազմակերպել՝ ահ ու սարսափ տարածելով մայրաքաղաքի ոչ մահմեդական բնակչության շրջանում: Քեմալի մայրաքաղաք մեկնելու լուրը ավելի խորացրեց պոլսահայերի տագնապը, քանզի բոլորին հայտնի էր, թե ինչով ավարտվեց նրա մուտքը Զմյուռնիա: Մկսվեց պոլսահայերի խուճապահար փախուստը, ինչը կրկին ուղեկցվեց նրանց ունեցվածքի թալանով: 1923 թ. մարտի 29-ին ընդունվում է օրենք Կ. Պոլսից և այլ քաղաքներից փախչողների լքյալ գույքի տնօրինման մասին, որն ուժի մեջ մտավ ապրիլի 15-ին: Դրանից հետո Կ. Պոլսից փախածների ունեցվածքը բռնագրավվում էր և անցնում Ֆինանսների նախարարության «Լքյալ գույքի հանձնաժողովներին», որոնք էլ սկսեցին այդ ունեցվածքի վաճառքը²³:

21 Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 109:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 116:

23 Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 125:

1923 թ. հունիսի 23-ին Անկարայի Ազգային մեծ ժողովը փոփոխություններ կատարեց ապրիլի 15-ի օրենքում, որով արդեն մերժվում էր ոչ մահմեդականների ցանկացած պահանջ՝ լքյալ գույքի հետ կապված, դրանով բացառելով երկիր վերադարձող հայերի՝ սեփական գույքի նկատմամբ իրավունքը վերականգնելու հնարավորությունը: Ընդհանուր առմամբ մինչև 1926 թ. Անկարայի Ազգային մեծ ժողովն ընդունել է «Լքյալ գույքին» վերաբերող 9 օրենք, իսկ 1927 թ. մայիսի 23-ին ընդունվեց ևս մեկ օրենք, որով լիովին բացառվում էր հայերի վերադարձի հնարավորությունը:

Ուստի կարծում ենք, որ աշխատությունն էապես կշահեր, եթե հեղինակը չբավարարվեր «Լքյալ գույքի մասին» և թուրքական տարբեր այլ օրենքների ներկայացմամբ, այլ կատարեր դրանց քննական վերլուծությունը, փորձելով վեր հանել հայերի ունեզրկման քաղաքականության «իրավական հիմնավորումների» տրամաբանական հոլովույթը և նրա առանձին օղակների պատճառահետևանքային կապերը:

Շեղինակն անդրադարձել է նաև օտարների մասնակցությամբ հայերի ունեզրկման գործընթացին՝ տարաբնույթ աղբյուրների հիման վրա ցույց տալով, որ ցեղասպանության ընթացքում հայերի ունեզրկածքին տիրացել են ոչ միայն թուրքական կառավարությունը, այլև օտարերկրյա, առաջին հերթին՝ գերմանական կազմակերպություններն ու հաստատությունները:

Օսմանյան կայսրությունում գործող օտարերկրյա ապահովագրական ընկերությունները, որոնք ապահովագրել էին հայերի կյանքն ու ունեզրկածքը՝ չվճարելով նրանց ապահովագրական վճարները, նույնպես անուղղակիորեն մասնակցում էին հայերի ունեզրկման քաղաքականությանը: Բազմաթիվ էին դեպքերը, երբ հայերը դիմում էին ապահովագրական վճարները ստանալու համար, սակայն նրանց մերժում էին, պատասխանելով, որ նույն պահանջով արդեն դիմել է թուրքական կառավարությունը²⁴:

Շեղինակը նշում է, որ Թուրքիայում հայերի ունեզրկման քաղաքականությունը շարունակվում է առ այսօր: 1942 թ. նոյեմբերի 11-ի «Ունեզրկածքի հարկի մասին» օրենքի ընդունումով ոչ մահմեդական փոքրամասնությունների վրա ծանր հարկեր դրվեցին, ինչի հետևանքով կողոպտվեցին պոլսահայերը, իսկ ովքեր չկարողացան վճարել այդ տուրքը, աքսորվեցին հարկադիր տաժանակիր աշխատանքների: 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին իշխանությունների անմիջական աջակցությամբ Ստամբուլի և Իզմիրի ոչ մահմեդականների տները, գործարանները, կրոնական հաստատությունները թալանվելու և հրկիզվելու հետևանքով մեծ թվով հայեր ու հույներ հեռացան Թուրքիայից²⁵: Նման իրողություններն ապացուցում են, որ արդի Թուրքիայի մեծահարուստների հարստության աղբյուրն առաջին հերթին հայերից բռնագավթված ունեզրկածքն է:

Շեղինակը փորձում է մոտավոր հանրագումարի բերել արևմտահայության կորուստները՝ իրավացիորեն նշելով, որ թե՛ Ազգային պատվիրակության և թե՛ Լեփսիուսի ներկայացրած թվային տվյալները չեն կարող ընդունվել իբրև մեկնակետ: Պատճառն այն է, որ դրանցում ներառված

24 Տե՛ս նույն տեղում, էջ 131:

25 Տե՛ս Աստույան Ա., նշվ. աշխ., էջ 141:

ԳՐԱԽՆԱԿԻ ԹՅՈՒՆՆԵՐ
Ե (ԺԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

չեն հայկական եկեղեցիների, մատուռների, վանքերի, վարժարանների, դպրոցների, առաջնորդարանների ողջ ունեցվածքը՝ իրենց կալվածքներով, կահկարասիով, չեն ներկայացված հայ կաթոլիկ և բողոքական համայնքների նյութական կորուստները, չեն հաշվառվել Օսմանյան կայսրության տարբեր դրամատներում և ապահովագրական ընկերություններում պահվող հայերի գումարները, որոնք յուրացվեցին երիտթուրքական կառավարության կողմից: Բացի այդ հաշվառված չեն նաև որբահավաքի արդյունքում քրդերից ու թուրքերից փրկագնված հայ որբերի համար վճարված գումարները և այն կաշառքները, որոնք տրվել են թուրք պաշտոնյաներին ունևոր հայերի կողմից՝ նրանց տեղահանությունը, այսինքն՝ մահը հետաձգելու համար: Այս ամենով հանդերձ՝ ի վերջո պարզ չի դառնում, թե որպես նյութական կորուստների մոտավոր հանրագումար՝ ինչ թիվ է առաջ քաշում հեղինակը, հարց, որը, կարծում ենք, առանձին տնտեսագիտական ուսումնասիրության առարկա է:

Աշխատությունն ավարտվում է արժեքավոր հավելվածներով: Դրանցից **առաջինում** զետեղված են «Լքյալ գույքի մասին» թուրքական օրենսդրական ակտերը, որոնց միջոցով «օրինականացվում էր» հայերի ունեզրկումը, իսկ **երկրորդում** լուսապատճեններով ներկայացված են հայերի ունեզրկման վերաբերյալ վիճակագրական տվյալներ պարունակող թուրքական մի շարք վավերագրեր:

Աշխատության արժանիքներից մեկն էլ Օսմանյան կայսրությունում հայերի տնտեսական կարողությունների մասին վկայող լուսանկարների, ինչպես նաև թերթերում հրատարակված տարբեր ապահովագրական ընկերությունների գովազդային էջերի ներկայացումն է:

Ամփոփելով շարադրանքը՝ կարծում ենք, որ իր «Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ.» աշխատությամբ Ա.Աստոյանին ընդհանուր առմամբ հաջողվել է ոչ միայն հանրագումարի բերել Հայոց ցեղասպանության ընթացքում հայերի ունեզրկման վերաբերյալ պահպանված նյութերը, այլև գիտական շրջանառության մեջ դնել բազմաթիվ նորահայտ վավերագրեր, ինչը պետք է համարել լուրջ ներդրում Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության գործում:

Արմեն 8. Մարուքյան
Պարմ. գիյր. թեկնածու

**ANAHIT ASTOYAN, DEPREDATION OF THE CENTURY:
expropriation of Armenians in the Ottoman empire in 1914-1923,
Yer., “Nairi”, 2013, p. 252.**

Armen Ts. Maruqyan